ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 10(80), 15 ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2025թ.

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՌԵԿՏՈՐԻ ԱՄԱՆՈՐՅԱ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի՛ աշխատակիցներ,
սիրելի՛ սովորողներ,

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ և Ձեր ընտանիքներին Ամանորի և Սուրբ Ծննդյան տոնի առթիվ՝ մաղթելով հաջողություններ ու ամենայն բարիք:

Սրանք տոներ են, որոնք խորհրդանշում են նոր սկիզբ, իսկ քանի որ լավ սկիզբը գործի կեսն է, ուրեմն Ամանորը դիմավորենք նորոգ հավատով:

Անշուշտ, Ամանորն իր հետ բերում է նոր հույսեր, նոր սպասումներ ու ծրագրեր: Համոզված եմ, որ այդ հույսերի և ծրագրերի իրականացումը մեծ ձեռքբերում է:

Անցնող տարին հագեցած էր բազում նախաձեռնություններով ու իրադարձություններով, ունեցանք զգալի ձեռքբերումներ, եղան դեռևս ավարտին չհասած ծրագրեր:

Տարեմուտին վճռականորեն հաստատում ենք, որ, ի դեմս ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի, կայացած, արդիական, ժամանակակից մեթոդներով զինված կրթօջախ ունենալու, օրինապաշտ, հայրենասեր քաղաքացի, բանիմաց, հմուտ ու անձնազոհ աշխատակից կրթելու մեր առաքելության մեջ անհողդողդ ենք:

Չկա և չի կարող լինել ոչինչ, որ մեզ կարողանա դույզն-ինչ շեղել այդ պատվաբեր ուղուց:

Առանձնակի հպարտությամբ ուզում եմ բարձրաձայնել կրթահամալիրի արհեստավարժ պրոֆեսորադասախոսական կազմի, հմուտ և հոգատար ուսումնաօժանդակ ծառայությունների աշխատակիցների և ուսումնատենչ, ազնիվ, բարեխիղճ սովորողների մասին, ովքեր ամենօրյա գործունեությամբ բարձրացրել են միմյանց և ողջ Կրթահամալիրի հեղինակությունը:

Սիրելի՛ աշխատակիցներ և սովորողներ, 2026 թվականը թող Ձեզ համար լինի ձեռքբերումների, հաջողության ու համերաշխության տարի, մաղթում եմ, որ գալիք տարում կյանքի կոչվեն Ձեր բոլոր երազանքները:

Թող գալիք տարին լինի խաղաղության, առողջության, բացվող ճանապարհների, հաղթահարած դժվարությունների և իրականացած երազանքների տարի: Շնորհավո՛ր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր
Մանուկ Մուրադյան

ՉԵԽ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԱՅՑԸ ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ. ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ, ԿԱՐԵՎՈՐ ԹԵՄԱՆԵՐՈՎ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՆՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Չեխիայի Հանրապետության քրեական ոստիկանության և հետաքննության ծառայության բյուրոյի հետ համագործակցության ծրագրի շրջանակում սույն թվականի դեկտեմբերի 2-5-ը ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում անցկացվեց «18 տարին չլրացած անձի հարցաքննությունը հատուկ սենյակում» թեմայով խորացված վերապատրաստման դասընթաց: Դասընթացը վարում էին չորս չեխ փորձագետներ, որոնց այցը նպատակ ուներ ոչ միայն մասնագիտական հմտությունների փոխանցումը, այլև հայ ու չեխ գործընկերների համագործակցության ամրապնդումը:

Վերապատրաստման դասընթացին մասնակցեցին ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային և քրեական ոստիկանության գլխավոր վարչությունների ծառայողներ և Կրթահամալիրի աշխատակիցներ, որոնց միացել էին նաև այն ծառայողները, ովքեր սույն թվականի հունիսին Չեխիայի Հանրապետությունում մասնակցել էին չեխական կողմի հրավերով իրականացված ճանաչողական այցին:

Դասընթացի պաշտոնական բացմանը ողջույնի խոսքով հանդես եկավ Կրթահամալիրի պրոռեկտոր Արմինե Հայրապետյանը՝ շնորհակալություն հայտնելով չեխ գործընկերներին և նշելով, որ երեխաների հարցաքննության ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրությունն ու փոխանակումը կարևոր նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետության իրավապահ հատվածի մասնագիտական կարողությունների զարգացման համար:

Չեխ մասնագետները ներկայացրին երեխայի հարցաքննության առանձնահատկությունները՝ ընդգծելով, որ իրավապահների գործողությունները պետք է լինեն ոչ միայն իրավաչափ, այլև զգայուն՝ կախված երեխայի հոգեբանական վիճակից և ընդունակություններից: Նրանք մանրամասն անդրադարձան իրենց երկրում գոյություն ունեցող մեթոդաբանությանը և գործող պրակտիկային՝ ներկայացնելով ինչպես իրավական, այնպես էլ տեխնիկական ասպեկտները:

Ընթացքում քննարկվեցին մի շարք առանցքային թեմաներ.

* «Երեխաների հարցաքննությունը հատուկ սենյակում».
* Հարցաքննության հատուկ սենյակների տեխնիկական և նյութական պահանջները.
* Երեխաների նկատմամբ բռնություն և սեռական դրդապատճառներով հանցագործություններ.
* Կիբեռտարածքում երեխաների կողմից կամ նրանց նկատմամբ կատարված հանցագործություններ:

Դասընթացի ամենակարևոր հատվածներից էր գործնական աշխատանքը: Փորձագետները ցուցադրեցին հարցաքննության իրական օրինակներ՝ կիրառելով ինչպես անատոմիական, այնպես էլ հուզական տիկնիկներ, որոնք օգտագործվում են տուժած երեխաների հետ աշխատանքում, հատկապես՝ ընտանեկան և սեռական բռնության դեպքերում:



Նրանք առանձնահատուկ ուշադրություն դարձրին այն գործելակարգերին, որոնք թույլ են տալիս խուսափել երեխայի կրկնակի տրավմայից, ապահովել նրա անվտանգությունն ու հոգևոր կայունությունը:

Գործնական դասընթացի ընթացքում վերապատրաստվողները ներգրավվեցին խմբային աշխատանքների մեջ, խաղարկեցին զանազան իրավիճակներ և ստացան մեկնաբանություններ չեխ փորձագետների կողմից:

Չեխ փորձագետները հանդիպում ունեցան Կրթահամալիրի ռեկտոր Մանուկ Մուրադյանի հետ և քննարկեցին հետագա համագործակցության հնարավոր ուղղությունները: Այցի ընթացքում նրանք շրջեցին Կրթահամալիրի տարածքում՝ ծանոթանալով վիրտուալ իրականության (VR) սրահին, վիրտուալ հրաձգարանին, սիմուլյացիոն սենյակներին, որտեղ անցկացվում են սովորողների գործնական պարապմունքները: Այցելեցին նաև Հայ Օգնության Ֆոնդի Երեխաների պաշտպանության կենտրոն, որտեղ նրանց ներկայացվեց կենտրոնի գործունեությունը և երեխաների պաշտպանության ոլորտում իրականացվող աշխատանքները:

Այցն ամբողջացավ կարևոր նախաձեռնությամբ. չեխ գործընկերները Կրթահամալիրին նվիրեցին երեխաների հարցաքննության համար նախատեսված տիկնիկների երկու լրակազմ: Նվիրատվության փաստը պաշտոնապես ամրագրվեց համապատասխան արձանագրությամբ:

ԿԻՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ-ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՄԲ

Նոյեմբերի 26-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում կայացել է կլոր սեղան-քննարկում, որի բանախոսն էր ԱՄՆ Հետաքննությունների դաշնային բյուրոյի (FBI) հատուկ գործակալ Անահիտ Ակոպյանը՝ Լոս Անջելեսի տարածքային գրասենյակից:

Միջոցառումը կազմակերպվել էր ԱՄՆ դեսպանության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բաժնի աջակցությամբ:

Քննարկմանը մասնակցել են Կրթահամալիրի կին սովորողները՝ նպատակ ունենալով խորացնել մասնագիտական պատկերացումները, փոխանակել տեսակետներ և քննարկել քաղաքացիական անվտանգության ոլորտում համագործակցության նոր մոտեցումներ:

Հանդիպման ընթացքում շեշտվել է հասարակության հետ փոխվստահության ամրապնդման, համակողմանի հաղորդակցական հմտությունների զարգացման և համայնքամետ ոստիկանության ժամանակակից մոդելների կարևորությունը:

Անահիտ Ակոպյանը ներկայացրել է միջազգային փորձից բխող դիտարկումներ՝ ընդգծելով, որ իրավակարգի արդյունավետ ապահովման հիմնասյունը կրթված, հաղորդակցվելու մշակույթ ունեցող և հանրության կարիքներին զգոն արձագանքող ոստիկանական անձնակազմն է:

Այս նախաձեռնությունը ևս մեկ անգամ ընդգծում է Կրթահամալիրի հավակնոտ ընթացքը՝ պատրաստելու ժամանակակից մտածողությամբ, մասնագիտական բարձր պատրաստվածությամբ և արժեքահեն ծառայությամբ առաջնորդվող կին ոստիկաններ:

ՆԳՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում դեկտեմբերի 4-ին անցկացվել է «ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության աշխատակիցների վերապատրաստում. նախապատրաստական աշխատանքների ամփոփումն ու հետագա քայլերը» խորագրով կլոր սեղան-քննարկում, որին մասնակցում էին Կրթահամալիրի, ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության ղեկավարությունը, բաժնի պետեր, դասախոսներ և աշխատակիցներ, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Քննարկումը մեկնարկեց Կրթահամալիրի ռեկտոր Մ. Մուրադյանի, ՆԳՆ ՄՔՇ պետ Ն. Դավթյանի, Միգրացիայի միջազգային գործակալության երևանյան գրասենյակի ղեկավար Ի. Տեր-Մինասյանի և ՄԱԿ-ի՝ փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի՝ Հայաստանում ներկայացուցչության իրավաբանական բաժնի ղեկավար Ա. Կոպցիուխի ողջույնի խոսքերով: Բանախոսները կարևորեցին ՆԳՆ ՄՔՇ աշխատակիցներին վերապատրաստելու նախաձեռնությունը, գործընթացի արդյունավետ կազմակերպման և անցկացման ուղղությամբ միջազգային կառույցների օժանդակությամբ գործադրված համատեղ ջանքերն ու կատարված աշխատանքները, հատկապես՝ վերապատրաստումներն ինստիտուցիոնալ հենքի վրա շարունակելու մտադրությունը, ինչը կնպաստի անձնակազմի մասնագիտական շարունակական զարգացմանը՝ նոր աշխատակիցների համար ստեղծելով կարողությունների ձեռքբերման արժեքավոր հնարավորություններ:

Ամփոփվեցին դասախոսների վերապատրաստումների արդյունքները: Իրենց նկատառումները հայտնեցին «Հայաստանում միգրացիայի և ապաստանի արդյունավետ կառավարման քաղաքականության շրջանակի և կարողությունների ընդլայնում» ծրագրի շրջանակներում Կրթահամալիրի և ՄՔՇ աշխատակիցների համար «դասընթացավարների վերապատրաստում» ձևաչափով կազմակերպված դասընթացների վերապատրաստողներ Տ. Զարգարյանը և Ս. Խաչատրյանը: Նշվեց, որ դասախոսների ուսուցումը կենտրոնացված է եղել Moodle համակարգի արդյունավետ կառավարման և թվային միջավայրում դասավանդման լավագույն փորձի վրա՝ մասնակիցներին զինելով արդի, ճկուն և մատչելի ուսուցում կազմակերպելու համար անհրաժեշտ գործիքներով, մասնավորապես՝ տարվել է թիմային, մեթոդաբանական ինտեգրված աշխատանք՝ դասախոսությունների պատրաստման, նյութի մատուցման, գիտելիքների ստուգման ուղղությամբ, ինտերակտիվ ուսուցման մոդելների, խմբային աշխատանքների փորձարկմամբ: Ընդգծվեց, որ ՄՔՇ աշխատակիցների վերապատրաստման նախաձեռնությունը ողջունելի է հատկապես հեռավար ուսուցմամբ, էլեկտրոնային հարթակում մոդուլների կիրառմամբ, և այն ակնկալվող դրական արդյունքներ կարձանագրի:

Այնուհետև քննարկվեցին հետագա քայլերը և լուծում պահանջող հարցերը: Զեկույցներով հանդես եկան Կրթահամալիրից և ՄՔՇ-ից վերոնշյալ ծրագրով վերապատրաստված դասախոսները՝ Ա. Սաֆարյանը, Ա. Կարապետյանը, Ս. Մինասյանը և Ս. Մանասյանը:

Մ. Մուրադյանի և Ն. Դավթյանի հարցադրումները, ներկաների պարզաբանումներն ու ճշգրտող պատասխաններն առնչվում էին Կրթահամալիրի կրթական ռեսուրսների արդյունավետ կիրառմանը, կանխատեսելի ժամկետներում ձևավորվող խմբերին, դրանց թվաքանակին, ուսումնական ծրագրերին և վերջնարդյունքներին, ՄՔՇ ոլորտի օրենսդրական փոփոխություններին և առաջիկա գործընթացներին համահունչ՝ աշխատակիցների մասնագիտական գիտելիքների ընդլայնման առումով ուսումնական նյութի ադապտացմանը և այլ արդի մարտահրավերներին: Մասնավորապես, նախատեսվում է կազմակերպել բազային և խորացված ուսուցում: Բազային դասընթացները կվարեն Կրթահամալիրի, իսկ խորացվածը՝ ՄՔՇ դասախոսները: Առաջարկվեց աշխատանքային հանդիպումներով քննարկել կազմակերպչական բնույթի հարցերը՝ հստակ ուրվագծել 2026թ. ժամանակացույցը, մշտադիտարկել դասընթացները, և, պրակտիկ փորձից ելնելով, կատարել փոփոխություններ՝ համադրելով դասախոսական և մասնագիտական աշխատանքի փորձը, վերապատրաստումներ իրականացնելու՝ Կրթահամալիրի տարիների փորձառությունը:

Ամփոփելով Կլոր-սեղանի աշխատանքները՝ Կրթահամալիրի ռեկտոր Մանուկ Մուրադյանը շնորհակալություն հայտնեց քննարկման մասնակիցներին, հատկապես միջազգային գործընկերներին ու վստահեցրեց, որ գործընթացը հաջողված է, նման ձևաչափով հանդիպումների շնորհիվ առաջադրված հարցերն ամրագրվում են ու գործնական լուծում ստանում:

ԱՊԱԳԱ ՊԱՐԵԿՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀՈՍՔՆ ԱՄՓՈՓԻՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ Է ԱՆՑՆՈՒՄ

ՆԳՆ կրթահամալիրում դեկտեմբերի 1-ից մեկնարկել է «Ոստիկանական գործ» մասնագիտության «Պարեկ» որակավորմամբ արհեստագործական կրթական ծրագրով 2024-2025 ուսումնական տարվա առկա անվճար ուսուցման 1-ին հոսքի սովորողների ամփոփիչ պետական ատեստավորումը:

Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցում է ՆԳՆ կրթահամալիրում 6-ամսյա ուսումնառություն անցած 109 սովորող: Ավարտական քննություններին նախորդել է մասնագիտական պրակտիկան, որի ընթացքում սովորողներն ամրապնդել են Կրթահամալիրում ստացած տեսական և գործնական գիտելիքները: Պետական ամփոփիչ ատեստավորումը կշարունակվի մինչև դեկտեմբերի 5-ը ներառյալ: Ատեստավորումը բարեհաջող հաղթահարածները ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երևան քաղաքի գնդում և մարզային ստորաբաժանումներում կնշանակվեն համապատասխան պաշտոնների:

ԻՐԱԶԵԿՄԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԹԱԼԻՆՈՒՄ

Թալինի համայնքապետարանում 2025թ. դեկտեմբերի 02-ին տեղի ունեցավ իրազեկման հանդիպում՝ ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանդիպմանը ներկա էին Թալին համայնքի ղեկավար Տավրոս Սափեյանը, համայնքապետարանի աշխատակիցներ, ինչպես նաև Թալինի տարբեր դպրոցների աշակերտներ և ուսուցիչներ:

Կրթահամալիրի մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի պետ Արշակ Ավագյանը և նույն բաժնի մասնագետ Լիլիթ Նազարյանն իրազեկման հանդիպման ընթացքում մանրամասն ներկայացրին Կրթահամալիրի գործունեությունը, ծրագրերը և ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայությունում ընդունելության կարգն ու ձևաչափը:

Միջոցառման ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեցան ուղղելու իրենց հարցերը, ծանոթանալու ինչպես Կրթահամալիրի առաջարկած ուսումնական ծրագրերին, այնպես էլ ՀՀ ՆԳՆ ոստիկանության, հատկապես՝ Պարեկային ծառայության առանձնահատկություններին:

Հանդիպումն ամրապնդեց համայնք – պետական կառույց համագործակցությունը՝ խթանելով երիտասարդների իրազեկվածությունն իրավապահ ոլորտի կարիերային ուղիների վերաբերյալ:

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԱՉԱՓ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ» ԹԵՄԱՅՈՎ ԵՐԿՕՐՅԱ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Սույն թվականի դեկտեմբերի 1-2-ը ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում անցկացվեց «Ոստիկանության կողմից մարդու իրավունքների իրավաչափ սահմանափակումը և հարկադրանքի կիրառումը» թեմայով վերապատրաստման դասընթաց: Այն 2024 թվականի դեկտեմբերի 2-6-ը ԵՄ իրավապահ մարմինների վերապատրաստման գործակալության (CEPOL) կողմից կազմակերպված և Կրթահամալիրում իրականացված՝ «Մարդու իրավունքների խախտումը. ոստիկանության կողմից ուժի կիրառումը» ազգային դասընթացի տրամաբանական շարունակությունն էր:

Վերապատրաստումն իրականացրել են CEPOL-ի վերոնշյալ դասընթացին մասնակցած մասնագետները՝

* **Ամալյա Սաֆարյան** – ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնի պետ,
* **Աղավնի Կարապետյան** – ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,
* **Վիրաբ Համբարձումյան** – ՀՀ արդարադատության նախարարության խորհրդական, ԵՊՀ-ի քրեական իրավունքի ամբիոնի դասախոս,
* **Գեղարդ Խուրշուդյան** – ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիայի հատուկ սպառազինության և մարտավարական գնդի ծառայության կազմակերպման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ:

Դասընթացին մասնակցել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիայի 20 ծառայող՝ հնարավորություն ստանալով խորացնել գիտելիքները մարդու իրավունքների պաշտպանության, դրանց իրավաչափ սահմանափակման հիմքերի, ինչպես նաև ոստիկանության կողմից հարկադրանքի կիրառման իրավական ու գործնական առանձնահատկությունների վերաբերյալ:

ԶՐՈՒՅՑ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՍՐՏԻ ԿԱՆՉՈՎ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժության էության, դերի, մեթոդների մասին զրուցել ենք ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ավագ դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Մարիամ Առաքելյանի հետ, ով, երկար տարիներ անմնացորդ նվիրումով գործի դնելով իր մասնագիտական հմտությունները, սովորողներին դասավանդում է «Օտար լեզու (անգլերեն)» առարկան:

- Բարև Ձեզ, տիկի՛ն Առաքելյան, մանկավարժությունը բժշկության պես բարդ մասնագիտություն է. մեկը ֆիզիկական առողջությունն է ապահովում, մյուսը հոգևոր առողջությունը: Երկուսն էլ ճակատագրական են, երբ ընտրեցիք այս մասնագիտությունը, Դուք գիտակցո՞ւմ էիք այդ առաքելությունն ստանձնելու բարդությունը:

- Իհարկե, գիտակցում էի: Բայց այդ բարդության հետ մեկտեղ գիտակցում էի, թե որքան շնորհակալ աշխատանք է այն, թերևս աչքիս առաջ ունենալով իմ ուսուցիչներին: Ինձ համար չկա ավելի մեծ բավարարվածություն, քան սովորողների սերն ու հարգանքը վայելելը:

- Ինչու՞ ընտրեցիք հենց մանկավարժի մասնագիտությունը, արդյո՞ք ընտրությունը ծնողների կողմից էր, թե՞ ինքնաբուխ:

- Մեծ մասամբ ընտրությունն իմն է եղել: Հիշում եմ՝ դպրոցական տարիներին ուսուցիչներս նույնպես նկատել էին մանկավարժական որոշակի կարողություններ և հաճախ ինձ խնդրում էին նոր դասը բացատրել, ինչը մեծ սիրով էի անում: Մայրս, որ բարձրագույն մաթեմատիկա էր դասավանդում, նույնպես ուղղորդել է մասնագիտության ընտրության հարցում:

- Ինչպե՞ս եք միաձուլում խստությունն ու կարգապահությունը դասը վարելու ինտերակտիվ մեթոդի հետ:

- Քանի որ ինտերակտիվ մեթոդը ենթադրում է եռակողմ հաղորդակցական բաղադրիչ՝ դասախոս-ուսանող, ուսանող-դասախոս և ուսանող-ուսանող, ապա իրապես խստությունն ու կարգապահությունը պահպանելը չափազանց կարևոր է: Այս դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել ընդհանուր լսարանի և յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները և ընտրել համապատասխան ինտերակտիվ մեթոդներ, պատրաստ լինել մեթոդների գործադրման ընթացքում ճկունություն ցուցաբերելու և ըստ անհրաժեշտության՝ փոփոխելու:

- Ինչու՞ է օտար լեզվի ուսումնասիրությունն անհրաժեշտ ոստիկանների գործնական աշխատանքում:

- Հատկապես արտաքին ծառայության ոլորտում ստեղծվում են այնպիսի իրավիճակներ, երբ մասնակիցների մեջ լինում են օտարերկրացիներ, և անհրաժեշտություն է առաջանում նրանց հետ ապահովել առաջին անհրաժեշտության լեզվահաղորդակցություն:

- Նշե՛ք ոստիկանական բուհում անգլերեն դասավանդելու երեք առանձնահատկություն:

- Մեր բուհում դասավանդման ամենակարևոր առանձահատկությունն այն է, որ կարգապահությունն ու հաճախելիությունը բարձր մակարդակում են: Իսկ այս կարևոր նախապայմաններից բխում են նույնիսկ երեքից ավել առանձնահատկություններ, ինչպիսիք են դասի պլանավորումը, ընթացիկ և ամփոփիչ ստուգումը, լսարանների նյութատեխնիկական հագեցվածությունը և այլն:

- Ի՞նչ մեթոդներով կարելի է դրդել անգամ ամենածույլ ուսանողին սովորել հետաքրքրությամբ:

- Խրախուսելով նրանց ամենաչնչին հաջողությունը:

- Եթե չեմ սխալվում, Դուք նաև «Ֆրանսերեն» էիք դասավանդում այս բուհում, կմանրամասնե՞ք՝ ինչպե՞ս էր կազմակերպվում ուսուցումը:

- Ֆրանսերենի դասընթաց կազմակերպվել է 2012-2013 ուստարում՝ ոստիկանության ակադեմիայի երկրորդ կուրսերում ֆակուլտատիվ պարապմունքների ձևաչափով:

▶ 4

ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՊԱԳԱ ԻՐԱՎԱՊԱՀԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ

Ես մանկուց մեծացել եմ ծառայության գաղափարների ներքո, քանի որ հայրս զինվորական է: Հորս ծառայողական կերպարն ու վարքագիծը դարձան այն հիմնարար օրինակները, որոնց միջոցով ես վաղ տարիքից պատկերացում ձևավորեցի այն մասին, թե իրականում ինչ է նշանակում կրել համազգեստ և կրել պատասխանատվություն մարդկանց անվտանգության համար: Զինվորագրվելը հիրավի փառք է և մեծապատիվ հարգանք այն նվիրյալներին, ովքեր ունեն մեկ ընդհանրություն: Մարդիկ, որոնք սիրում են իրենց երկիրը, անձնվիրաբար պահում և պաշտպանում են այն, օրենքի և օրինականության երաշխավորն են: Հորս զինվորական կեցվածքը՝ խստապահանջությունն ու ներքին ազնվությունը, մեր ընտանիքի համար միշտ եղել են կայունության և վստահության, իսկ ինձ համար՝ ապագա իրավապահ դառնալու հիմք: Առաջնորդվելով նրա օրինակով՝ տարեցտարի ավելի խորապես էի հասկանում, որ ծառայությունը նրա համար ոչ թե պարտականություն էր, այլ հավատարմություն ընտրած ուղուն: Հորս հետևողականությունը, կարգապահությունն ու սկզբունքայնությունը դարձան իմ առաջին կարևոր դասերը, որոնք էլ ժամանակի ընթացքում ուղղորդեցին ինձ դեպի իրավապահ համակարգ:

Անկեղծ լինենք. բարդ և դժվարին մասնագիտություն ենք ընտրել, կյանքի համար վտանգավոր, բայց միևնույն ժամանակ՝ պատվաբեր: Յուրաքանչյուր մարդ կյանք է մտնում սեփական համոզմունքներով ու սկզբունքներով. նա ունենում է կյանքը տեսնելու և սիրելու սեփական տեսակետը ու աշխարհին և մարդկանց ծառայում է այդ տեսանկյունից ընբռնած իր հնարավորություններով:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում առաջին իսկ օրվանից ես զգացի, որ այստեղ պատասխանատվությունը պարզապես բառ չէ, այլ ներքին օրենք է ցանկացած ծառայողի համար, որը պետք է կերտի ապագա իրավապահի բնավորությունն ու ծառայողական կերպարը: Իրավապահի ճանապարհն սկսվում է ոչ թե պատվական համազգեստից, այլ հոգու կարգապահությունից. գիտակցումից, որ յուրաքանչյուր որոշում կարող է կշռել մարդկային ճակատագրեր: Պատասխանատվությունը յուրաքանչյուրիս մեջ ձևավորվում է որպես կամքի և բարոյականության միաձուլում. կարողանալ պահպանել օրենքը նաև այն ժամանակ, երբ հանգամանքները դժվար են, իսկ ընտրությունը՝ ծանր: Յուրաքանչյուր հերթափոխ, յուրաքանչյուր քայլ, յուրաքանչյուր գործողություն մոտեցնում է մեզ այն վստահությանը, որ հասարակությունը կարող է ապավինել իր իրավապահին: Ծառայությունը պատասխանատվություն է, որը չի ավարտվում հերթապահության ժամով: Դա կյանքի կանչն է՝ պաշտպանելու, արդարացնելու, ամրացնելու հասարակական անդորրը: Իրավապահի ուժը միայն օրենքի շրջանակներում չէ, այլ նաև իր մարդկային կեցվածքում՝ կարեկցելու, լսելու, ճիշտ որոշելու, երբ իրավիճակը պահանջում է սառնասրտություն, իսկ հասարակությունը՝ պաշտպանություն:

Այսպիսով՝ պատասխանատվությունն ապագա իրավապահի արժեքն է, նրա անտեսանելի վահանը, որով մտնում է կյանքի բարդ ու պատասխանատու ծառայության մեջ: Ապագա իրավապահի համար պատասխանատվությունն սկսվում է սեփական անձից՝ ինքնակարգապահությունից, ազնվությունից, էթիկական վարքագծից:

Ալվարդ Հովհաննիսյան
ոստ. ուսումնական ստորաբաժանում,
2-րդ կուրս

ԶՐՈՒՅՑ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՍՐՏԻ ԿԱՆՉՈՎ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

3 ◀

- Կհիշե՞ք Ձեր առաջին մուտքը լսարան:

- Իհարկե, իմ անմոռանալի հուշերից մեկն է:

- Ինչպե՞ս պետք է լինի ուսանող - դասախոս հարաբերությունը:

- Ուսանող-դասախոս հարաբերությունները պետք է հիմնված լինեն փոխադարձ հարգանքի և վստահության վրա:

- Լսարան պահելը շատ դժվար է. լավ մասնագետ լինելը դեռ բավարար չէ դասը լսելի դարձնելու և առարկայի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար: Կասե՞ք՝ ո՞րն է Ձեր գաղտնիքը և ինչպե՞ս եք մոտիվացնում ուսանողներին:

- Իսկապես, ճիշտ նկատեցիք: Հատկապես այսօրվա տեղեկատվական հոսքերի պայմաններում բավականին դժվար է ձևավորել սովորողների երկարատև և կայուն մոտիվացիա: Մոտիվացիայի ձևավորման գործում շատ արդյունավետ է դասապրոցեսը բազմաբնույթ դարձնելը, առաջադիմության համար խրախուսելը, ուսումնական նյութի հեշտ յուրացումն ապահովելը, դասընթացը պլանավորելիս սովորողների ուսումնառության ոճերը կամ նախասիրությունները հաշվի առնելը, ամեն դասի ավարտին ինքնավերլուծությամբ զբաղվելը և ինքնակատարելագործվելը:

- Ընտանիք, աշխատանք և առավել ևս՝ գիտական աշխատանք. ինչպե՞ս եք կարողանում համատեղել:

-Իրականում բավականին դժվարությամբ: Աշխատում եմ ճիշտ պլանավորել անելիքներս և ժամանակ հատկացնել յուրաքանչյուր գործողությանը:

- Որո՞նք են Ձեր ուժեղ և թույլ կողմերը:

- Ուժեղ կողմերից կարող եմ նշել, որ պահանջկոտ եմ, հետևողական և նպատակասլաց: Իսկ թույլ կողմերից՝ շատ նոստալգիկ եմ և հեշտ չեմ հարմարվում փոփոխություններին:

- Որո՞նք են Ձեր հիմնական արժեքները՝ որպես մասնագետ և որպես մարդ:

- Ինձ համար այդ արժեքները նույնն են՝ բարեխղճություն, նպատակասլացություն, ապրումակցում:

- Պատմե՛ք Ձեր կյանքի գլխավոր ձեռքբերման մասին:

- Իմ կյանքի գլխավոր ձեռքբերումն իմ հրաշալի ընտանիքն է:

- Ի՞նչը կփոխեիք կրթական համակարգում:

- Եթե խոսքը մասնագիտական կրթության մասին է, ապա կներդնեի կրկնակի դիպլոմով կրթական ծրագիր բոլոր մասնագիտությունների գծով: Կարծում եմ՝ ներկայիս գլոբալիզացիայի և փոփոխվող աշխատաշուկայի պայմաններում բավականին մոտիվացնող է սովորողի համար ավարտել մեկ բուհ՝ ներդնելով միավոր ժամանակ և ձեռք բերել երկու բուհի դիպլոմ, որոնցից մեկն արտասահմանյան բուհի է:

- Ինչպե՞ս կգնահատեք այսօրվա սերնդին: Ձեր մանկավարժական երկար տարիների փորձից ի՞նչ կցանկանաք փոխանցել ուսանողներին:

- Այսօրվա սերունդն իմ պատկերացմամբ ավելի ինքնահաստատված է, կողմնորոշված և ինքնուրույն: Սակայն կցանկանայի, որ մեր երիտասարդներն ավելի արժևորեն բարձրագույն կրթությունը, հավատան, որ կրթությունն է իրենց երազած ապագայի երաշխիքը, գնահատեն իրենց ուսումնառության տարիները և բաց չթողնեն այդ թանկարժեք ժամանակը:

- Ի՞նչ եք կարծում, մանկավարժին ստաժն է մանկավարժ դարձնու՞մ, թե՞ մանկավարժ ծնվում են:

- Կարծում եմ՝ ո՛չ մեկը, ո՛չ մյուսը: Մանկավարժին իր աշխատանքի հանդեպ ունեցած սերն է դարձնում մանկավարժ:

- Ձեր կարծիքով՝ կա՞ն վատ գրքեր: Ձեր ընթերցած գրքերից ո՞րն է ամենատպավորիչը, և դրանցից ո՞ր գիրքը կրկին կընթերցեիք:

- Յուրաքանչյուր գիրք ունի իր փիլիսոփայությունը: Նույն գիրքը կարող է տարբեր կերպ ընկալվել՝ կախված ընթերցողի տարիքից և հոգեհուզական վիճակից: Այդ պատճառով չեմ կարող ասել, որ վատ գրքեր կան: Իմ կարդացած գրքերից ամենատպավորիչը Պաուլո Կոելյոյի «Ալքիմիկ»-ն է, որը սիրով կվերընթերցեի:

- Խոսենք նախասիրություններից. ի՞նչն է, որ մի քանի ժամով Ձեզ կտրում է իրական կյանքից:

- Նվագելը: Ես դաշնակահար եմ, և գեղեցիկ երաժշտություն ստեղծելն իսկապես կտրում է իրական կյանքից: Նվագելը միանգամայն տարբերվում է այսպես կոչված «պատրաստի» երաժշտություն լսելուց:

- Ո՞րն է կյանքի շարժիչ ուժը Ձեզ համար:

- Նպատակներ դնել և ձգտել հասնել դրանց:

Բլից հարցեր
Պատասխանում եք կարճ և արագ

- Երեք բառ, որով կբնորոշեք Ձեզ:

- Համեստ, պատասխանատու, ընկերասեր:

- Միտք, որն առաջինը ծագում է արթնանալիս:

- Ի՞նչ պետք է այսօր անեմ:

- Օրն սկսում եք ժամը...

- Ժամը 7:00-ին:

- Սիրած աֆորիզմը:

- Դու երջանիկ ես այնքանով, որքանով որոշել ես երջանիկ լինել (Աբրահամ Լինքոլն):

- Սիրելի զբաղմունքը:

- Ընթերցանություն, զբոսանք:

- Խորհուրդ, որը կտայիք:

- Հաճախ ժպտալ և վայելել կյանքի ամեն վայրկյանը:

- Իսկ վերջում... (ավելացրե՛ք այն, ինչ Ձեր մտքով անցնում է այս պահին):

- Շնորհակալություն այս բացառիկ հարցազրույցի համար:

Հարցազրույցը վարեց
Ա. Քոչարյանը

Ստեղծագործում են մերոնք

ՍԽԱԼՎԵԼ ԵՄ

Սխալվել եմ ես՝ կարծելով,
Որ կարող եմ ապրել այսպես՝
Մթության մեջ մոլորվելով,
Լինել քեզնով, բայց առանց քեզ:
Անտեսելով ինձ տրվածը՝
Որոնել եմ նոր ուղիներ
Ու ճամփեքին այդ հասկացել՝
Իմ բախտից եմ ես հեռացել.
Իմ այդ բախտը,
Այն փոքրիկը՝ դառն ու անգութ,
Որ դարձել է լուսավոր սուտ:
Լուսավոր է. այնտեղ դու կաս,
Բայց դա սուտ է. ու՞ր ես, չկաս...
Սխալվե՞լ եմ ես՝ կարծելով...
Սխալվել եմ, բայց այսքան շա՞տ,
Դե՛, սխալն էլ հո սխալ է.
Ի՞նչ քիչ ու շատ:

ԱՆԱՆՈՒՆ

Հոգիս թանձրացավ մի նոր մշուշով,
Քնած կարոտս նորից արթնացավ,
Երբ կրկին տեսա քո աչքերը ծով,
Խաղաղությունը ինձնից հեռացավ:
Միտքս տագնապեց, հոգիս հեկեկաց,
Ու տխրությունից ԵՍ-ս երերաց:
Այդ տխրությունը նորից ինձ դարձավ
Որպես մի հայացք,
Իբրև մի ցնորք,
Որը ինձ տվեց լոկ ցավ անողոք:
Հոգիս թանձրացավ մի նոր մշուշով,
Որտեղ կա, սակայն, մի թույլ լույսի շող,
Թույլ շողից ծնված մեծ հույս չմարող,
Այդ հույսն ինձ համար՝ մահու դեմ կարող,
Անկարող միայն մեր բաժանման դեմ:
Քեզ համար ողջն այս՝ մի ոչինչ, ցավոք,
Սակայն ինձ համար՝ մրմունջ ու աղոթք:
Ամենն այս կուզեմ պահել ողջ կյանքում,
Բոլորից գաղտնի, քեզանից թաքուն,
Հավիտենության իմ գաղտնարանում,
Որտեղ կա նաև մի շատ թանկ ԱՆՈՒՆ
Իմ գաղտնարանում՝ թաքնադարանում:

Գրետա Ալեքսանյան
շրջանավարտ

ԱՄԱՆՈՐՅԱ ԿԱՏԱԿՆԵՐ

- Այս տարին շատ արագ անցավ...

Միակ բանը, ինչ հաջողացրի փոխել, հեռուստացույցի ալիքներն էին:

***

- Ամանորին ուզեցի նորից սկսել կյանքս զրոյից...

Բայց բանկը հիշեցրեց, որ իմ զրոն իր մոտ է, ոչ թե ինֆորմացիոն դաշտում:

***

- Ամանորին ի՞նչ նվեր ստացար:

- Իմ ճակատագրի կողմից՝ հերթական հեգնական հուշում, որ իմ ծրագրերն իրեն չեն հետաքրքրում:

***

- Գրեցի Նոր Տարվա ցանկություն՝ «թող ամեն ինչ լավ լինի:

Ձմեռ պապը վերադարձրեց.

- Ստեղ կոնկրետ սխալ կա՝ «ամեն ինչ»-ը... Ավելի մանրամասնի՛ր, ես կախարդ չեմ, բյուրոկրատ եմ:

***

- Ո՞րն է միայնակությունը՝ բառիս բուն իմաստով:

- Երբ Նոր տարուն քեզ շնորհավորում է միայն նախագահը հեռուստացույցով:

***

Ամանորյա սեղանի շուրջը.

- Ինչու՞ ես դու ամեն անգամ խմելուց հետո աչքերդ փակում:

- Է~, պարզապես կնոջս խոստացել եմ, որ նոր տարվա մեջ աչքս օղու երես չի տեսնելու:

***

Նոր տարվա տոնակատարության երեկո է: Մի կին ասում է հարևան սեղանակցուհուն.

- Ինձ թվում է՝ մենք մի անգամ արդեն միասին դիմավորել ենք Նոր տարին 12 տարի առաջ:

- Իսկապե՞ս: Ինչ-որ չեմ հիշում:

- Ինձ մոտ էլ տեսողական հիշողությունը վատ է, բայց ա՛յ հագուստների առումով՝ անթերի է:

***

Մոտենում է Նոր տարին:

Լավատեսը.

- Նոր տարին հնից լավն է լինելու:

Հոռետեսը.

- Նոր տարին հնից վատն է լինելու:

Իրատեսը.

- Գրողը տանի, էլի պիտի ուտեմ ու պայթեմ:

***

Ամանորի գիշերն ապարանցին փողոցում վատանում է, շտապօգնության մեքենան գալիս է, բժիշկն ասում է. «Վիճակդ լավ չի, քեզ պետք է տեղափոխենք հանրապետական հիվանդանոց:

Ապարանցին ասում է. «Չէ՛, չէ՛, ես բարգավաճ եմ»:

***

Փոստի աշխատողները նամակները տեսակավորելիս հանդիպեցին մի նամակի, որը Ձմեռ Պապին ուղարկել էր մի փոքրիկ: Որոշեցին բացել և կարդալ:

- Բարև, սիրելի՛ Ձմեռ Պապ: Դրսում ցուրտ է, շուտով Նոր տարին կգա, իսկ ես տնից չեմ կարող դուրս գալ, որովհետև վերարկու, գլխարկ, տաք կոշիկներ և ձեռնոցներ չունեմ: Եթե հնարավոր է, ուղարկիր ինձ վերարկու, գլխարկ, տաք կոշիկներ և ձեռնոցներ:

Փոստի աշխատողները խղճացին, գումար հավաքեցին՝ ով ինչքան կարող էր: Գնեցին փոքրիկի ուզած նվերները, բայց ձեռնոցների համար գումարը չբավարարեց: Որոշեցին ուղարկել նվերներն առանց ձեռնոցների:

Որոշ ժամանակ անց փոքրիկից նորից նամակ եկավ Ձմեռ Պապին.

- Շնորհակալություն նվերների համար, սիրելի՛ Ձմեռ Պապ, բայց ձեռնոցներն ինձ չհասան. երևի փոստի աշխատողներն էին ծանրոցից հանել...

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ՆԳՆ կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «Աստղիկ Գրատուն» հրատարակչությունում:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 15.12. 2025թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Արուսյակ Քոչարյան